

վերականգնել թուրքիան: Եւ այդ հարկադրանքները պիտի ստիպեն թուրքիան հակուելու դէպի Եւրոպա:

Եւրոպայի դրամադուլուսը այլեւս մեծ դերութեամբ թուրքիա չի մտներ: Թուրքիոյ հակումը դէպի Եւրոպա պէտք է հասնի տեղ մը, ուր թրքական անկախութիւնն ու բարբարոսութիւնը որոշ ուժերով կաշկանդուած ըլլան: Աւելի պարզ խօսքով, թուրքիան հակա-կըշի տակ պէտք է իյնայ, որպէսզի դրամա-դուլուսը համարձակի հոն մտնել: Իսկ թուրք տարրը երբեք իր անկախութիւնը եւ այսօր-ուան ազատութիւնը, իր կամքով, չի զիջիր յանուն տնտեսական բարդաւաճման, կամ քա-ղաքակրթական վերածնունդի:

Անցնող տասնամեակը քաղաքական ի՞նչ բարդ ելեւէջներ արձանագրեց եւ, սակայն, թուրքիոյ կենսունակ տարրը, զինադադարէն ապրին, կառչած մնաց բոլշեւիկեան Ռուսաս-տանին: Ֆիզիքսպէս ան ոտքի կանգնեցաւ այդ դաշնակցութեան շնորհիւ, եւ այսօր տակաւին յամառօրէն կը մնայ այդ ճանապարհի վրայ: Ռուսը եւ թուրքը փոխադարձ մեծ շահեր կ'ա-պահովեն բարեկամ կամ դաշնակից մնալով: Իսկ այդ բարեկամութիւնը իր արդիւնքով հայկական շահերուն գուզահեռական չէ:

Այդ բարեկամութեան շնորհիւ Ռուսաս-տանի աչքին հայ ժողովուրդն ու Հայաստանը կը դադրին կշիռ ունենալէ: Մեր սեւ աչքերուն համար Ռուսաստանը կրնայ մեզ սիրել, բայց քաղաքական շահերու դասաւորումով, այլեւս մեզի չի նայիր, որովհետեւ մենք Պոլիս, Դար-տանել, Միջերկրական եւ Սեւ ծով չունինք տրամադրելու Ռուսիոյ հաւանական շարժում-ներուն: Հայաստանի բարձունքներու վրայ գե-տեղուած դատիոյով կարելի չէ համաշխարհա-յին հրդեհը բռնկցնել աշխարհի մէջ:

Ահա ուսմ-թրքական բարեկամութեան ա-ռաջին արդիւնքը:

Կայ նաեւ երկրորդ արդիւնքը, որ կ'ար-ձանագրուի թուրքիոյ օգտին: Թուրքիան, Ռուսաստանի բարեկամութիւնը ապահովելով, կ'ապահովէ նաեւ իր գոյութիւնը: Ան միջադ-գային քաղաքականութեան հաւասարակշու-թեան մէկ կողմի (Ռուսաստանի) նժարին մէջ ծանրութիւն կը դառնայ ու կ'երկարածուի իր

ընդարձակ երկրի ամբողջութիւնը: Որով հա-յերը ձեռքերը ծալած, Մարդարայի կամուր-ջին անկիւնը կը ստիպուին սպասել, մինչեւ որ այդ հաւասարակշուութիւնը խախտի, եւ թուր-քիան նոր հեղեղի մը ենթարկուի: Այս սպա-սումը խեղդիչ է հայերու համար:

Ուրեմն, ուսմ-թրքական բարեկամութիւ-նը հայերու համար կը դառնայ չարակամու-թիւն մը: Հետեւաբար, այդ բարեկամութեան սիրոյն, բոլշեւիկեան Ռուսաստանի օրինետա-ցիան ընդգրկելը տրամաբանական չէ:

Պարզամիտները կարող են առարկել, թէ հենց այդ բարեկամութեան շնորհիւ հայ ժո-ղովուրդի ֆիզիքական գոյութիւնը կ'ապահով-ուի: Սակայն, ներկայ դրութեան երկարաճը-գումը ամենօրեայ սպիտակ ջարդի կը մատնէ հայ ամբողջ ժողովուրդը, եւ այդ մենք կը տեսնենք ամէն տեղ: Իսկ երբ հայ-թրքական վիճը մերկանայ բոլշեւիկեան կեղծ շղարչէն, ինչպէս վերը ըսինք, Ռուսաստանը մեր սահ-մաններէն հեռացած կ'ըլլայ, եւ իր բարեկա-մութիւնը կը հաւասարի ոչնչի: Իսկ այդ կեղծ շղարչէն եթէ խարուող եւ տուժող մը պիտի ըլլայ, այդ ալ հայ ժողովուրդն է, որ պիտի ներկայանայ ճգնաժամին անպատրաստ ձեռքե-րով:

Ռուս-թրքական թշնամութեան մասին աւելորդ է այսօր խօսիլ եւ ըսել, որ վաղն այդ թշնամութիւնը պիտի գայ: Բոլշեւիկեան Ռու-սաստանի կողմէ, գոնէ իմ համոզումով, այդ պիտի քայլ մը անկարելի է: Բայց պահ մը են-թադրենք, թէ թուրքիան միացաւ Անգլիոյ, կամ այլ ուժերու եւ պատերազմի բռնուեցաւ Ռուսաստանի հետ: Բնական է, որ բոլշեւիկ-եան Ռուսաստանը խօսքի սահմաններէն պիտի անցնի եւ դիմէ գէնքի: Այն վայրկեանէն, երբ Ռուսաստանի գէնքի ձայնը լսուի Արաքսի եւ Ախուրեանի ափերուն վրայ, հայ ժողովուրդի օրինատացիան ինքնարեւարար կ'որոշուի: Այդպիսի բարդ պարագայի մը, հայ ժողովուրդի չեղդութիւնը կ'ըլլար ամենէն խելացի քայլը: Սակայն, ոչ մէկ խոհեմութիւն եւ դիւանադի-տական խոստում չպիտի կրնային ետ կեցնել հայ ժողովուրդի կենսունակ ուժը չղաշնակցելու այն բազուկին, որ պիտի հարուածէ թուրքի-ան: